

35 ԺԿ



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«01» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 079 - 25

Նախաձեռնող՝

« Ալվինա բնակելի համալիր » ՍՊԸ
ք. Արմավիր, Թումանյան փող. 36Կբ

Գործունեությունը՝

Ծաղկաձոր համայնքի Գլխավոր մարզահամալիր
թաղամաս 19 հողամաս հասցեում նախատեսվող
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում
Կողայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 079 - 25

«01» սեպտեմբեր 2025թ.

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ալվինա բնակելի համալիր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնքի Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19 հողամաս

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ գործունեությունն իրականացվելու է Ծաղկաձոր համայնքում Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19 հողամաս հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Դիտարկվող տարածքն իրենից ներկայացնում է 1.78164 հա մակերեսով բարդ երկրաչափական ուրվագիծ ունեցող հողամաս:

Նախագծի և հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը՝

- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 06 տրված՝ 05/02/2024թ.:
- տեղամասի ինժինեռաերկրաբանական հետազոտության եզրակացությունը Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն /կադաստրային ծածկագիր 07-005-0026-0944/ հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման է:

Նկարագրական մաս. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը բաղկացած է



լինելու 4 մասնաշենքից՝ «Ա», «Բ», «Գ» և «Դ» /շենքերից/, մասնաշենքերն իրենց հերթին բաղկացած են իրարից սեյսմիկ կարող բաժանված 2 սեկցիաներից: Ըստ նախագծի բնակելի համալիրը նախագծված է կասկադան՝ 7-10 հարկանի/նիշ. 0.00-37.20/, 1 ստորգետնյա /նիշ. -3.90/ հարկով: Առաջին հարկում /նիշ. 0.00/ տեղակայված են լինելու բնակելի, հասարակական և կոմերցիոն սենքերը, իսկ 2-10-րդ հարկերը շահագործվելու են որպես բնակելի տարածքներ: Ստորգետնյա /նիշ. -3.90/ հարկերում է նախագծված ավտոկայանատեղի և յուրաքանչյուր մասնաշենքի ստորգետնյա հարկը կարող է ծառայել տվյալ շենքի բնակիչների համար, որպես պարզագույն թաքստոց, որտեղ նախատեսված է ջրահեռացման և ջրամատակարարման համակարգ, ավտոնոմ լուսային և օդային համակարգեր, ինչպես նաև կրակմարիչներ: Մասնաշենքերի բնակելի հարկի բարձրությունը /հարկից հարկ/ կազմում է 3.30 մ: Հասարակական հարկի՝ առաջին հարկի /նիշ. 0.00/, բարձրությունը նախագծված է 3.60 մ: Երկրորդ հարկի հատակի նիշը գտնվում է 3.60 մ բարձրության վրա, իսկ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ամենաբարձր կետը գտնվում է 37.20 նիշում: «Ա» մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 1580.00 քմ, հարկայնությունը կազմում՝ 8-10 հարկ, «Բ» և «Գ» մասնաշենքերի կառուցապատման մակերեսը կազմում է 1735.50 քմ, համապատասխանաբար բաղկացած 7-8 և 8-9 հարկերից, «Դ» մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 1120.00 քմ, իսկ հարկայնությունը՝ 7-8: Ըստ նախագծի տրանսպորտային միջոցների մոտեցումները դեպի դիտարկվող տարածք (բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր) նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող ճանապարհների միջոցով՝ հարավային հատվածում գտնվող գրունտային ճանապարհի, Խ. Մուրադյան և Օլիմպիադայի փողոցների կողմից: Կոնստրուկտորական լուծման տեսանկյունից նախատեսվել է ե/բ հիմնային սալ, որի տակ ամբողջությամբ նախատեսվել է ջրամեկուսիչ շերտ, ինչպես նաև բոլոր կոնստրուկտիվ տարերը՝ ներառյալ պատերը (գետնախարսխային մասերը) նույնպես պատվում են ջրամեկուսիչ շերտով: Շենքի բոլոր կոնստրուկտիվ տարերը, որոնք չփվում են գրունտի հետ, պատվելու են ջրամեկուսիչ շերտով:

Համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

Տարածքի ընդհանուր մակերեսը – 17816,4 քմ,

Կառուցապատման մակերես - 6171 քմ;

Ճանապարհ, մայթ և այլ - 4230 քմ;

Կանաչապատման մակերես – 7415 քմ;

Բնակարանների քանակը 558 հատ,

Ավտոկայանատեղերի քանակը՝ ստորգետնյա 125 հատ, վերգետնյա 86 հատ:

Ստորգետնյա հարկի մակերեսը – 5910 քմ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից, իսկ ջրահեռացումը տարածքով անցնող կոյուղատարին միացումով:

Համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը նախատեսվում է Մաքրավանի ջրաղբյուրից, ջրահեռացումը Կեչառեցու փողոցով անցնող D=300 մմ կոյուղատարից:



Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոդիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը 7782 կՎա պահանջվող հզորությամբ կիրականացվի նախատեսվող ենթակայանից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործում՝ ապահովելով աղմուկի ցածր մակարդակ:

Պարճառարանական մաս. Հաշվետվության և նախագծի փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսում և դրանց կանխարգելման, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումների արդյունավետության դիտարկումներ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:
- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների՝ գրունտի քանդման, փորման հետլիցքի հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,
 - արտակարգ իրավիճակների առաջացման,
 - թափոնների կառավարման հետ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Բետոնի շաղախը կառաքվի Ծաղկաձոր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է՝ 480 խմ և կենցաղային աղբը՝ 34.8 տ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված է՝

- հողային և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել է ջրցան:

Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:



Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 18400 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր, հանվող 15200 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, իսկ 180 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում համաձայն՝ հողի բերրի շերտի հանման, հանված բերրի շերտի պահպանման ու օգտագործումը իրականացնելու ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N 1404 որոշման պահանջներին համապատասխան:

Տարածքը երկար տարիներ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Եզրափակիչ մաս Օրենսդրությանը համապատասխան՝ հանրային լսումներն իրականացվել են Ծաղկաձոր քաղաքի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանի և Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից կանաչապատման նախագծի հաստատումից հետո նախատեսվում է գրոյական նիշում իրականացնել կանաչապատում՝ 7415 քմ մակերեսով:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման



պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19 հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան